



**«ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ  
ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ N 4**

2021 թվականի նոյեմբերի 6-ի նիստի

**«ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
ԱՇԽԱՏԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի N 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 55-րդ կետը՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների **խորհուրդը որոշում է.**

1.«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2016 թվականի մայիսի 17-ի թիվ 2 որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգում (այսուհետ՝ աշխատակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) աշխատակարգի 19-րդ կետում «նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ» բառերը փոխարինել «խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ» բառերով.
- 2) աշխատակարգի 26-րդ կետում «ով ունի գիտությունների դոկտորի աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում» բառերը փոխարինել «որն ունի գիտական աստիճան և առնվազն հինգ տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժ:» բառերով.
- 3) աշխատակարգի 34-րդ կետում՝  
ա. «զ» ենթակետում «դոկտորի գիտական աստիճանը և (կամ) պրոֆեսորի գիտական կոչումը հավաստող վկայականների պատճենները» բառերը փոխարինել «գիտական աստիճանը հավաստող վկայականի պատճենը և


առնվազն հինգ տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժը հավաստող փաստաթղթեր (տեղեկանք աշխատանքի վայրից)» բառերով,  
բ. հանել «է» ենթակետը,

գ. «թ» ենթակետում՝ «բնութագիր վերջին աշխատավայրից» բառերը փոխարինել «երաշխավորագիր (ըստ հայեցողության)» բառերով.

դ. «ժ» ենթակետում «թեկնածուի» բառը փոխարինել «հավակնորդի» բառով:

- 4) աշխատակարգի 65-րդ կետում՝ «Կրթության և գիտության նախարարություն» բառերը փոխարինել «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բառերով:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝



ժաննա Անդրեասյան